

**1921թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ
Կ.ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ¹**

Խաչատուր Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բանալի բառեր. «Ճակատամարտ» թերթ, փետրվարյան ասպտամբություն, հեղափոխություն, բոլշևիկ, իշխանություն, Հայաստան, գործիչներ, երկիր:

Հայ-թուրքական պատերազմում հայկական բանալի ծանր պարտություններից հետո՝ Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանալի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին²: Հայ-հեղկոմը խոստանում էր խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էր իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեռափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հավաճանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր խորհրդային Հայաստանի անկախությունը³:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց այսպես կոչված ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության

¹ Հողվածը ընդունված է 15.10.14:

² ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

³ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1926թ., հոկտեմբեր, էջ 101-102:

անդամներ: Ավելի ուշ ձերբակալւեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ, որոնց ոտքով քշեցին Ալավերդի՝ ճանապարհին նրանցից ոմանց սպանելով, բոլորին ծաղր ու ծանակի ենթարկելով: Այս ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ):

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում՝ կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները¹: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: «Հայրենիքի փրկության կոմիտեն», զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալազյազ գծով բռնեցին դեպի Ջանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1921թ. Փետրվարյան ապստամբությունը բազմակողմանի քննության ենթարկվեց Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի էջերում: Պարբերականի 1921-1922թթ. տարբեր համարներում ներկայացվում են ապստամբության պատճառները, ընթացքը, հետևանքները:

Փետրվարյան ապստամբության մասին խոսելիս նախ անհրաժեշտ է քննարկել 1920թ. վերջին իշխանությունը խաղաղ ճանապարհով դաշնակցությունից բոլշևիկներին փոխանցելու հարցը: Իր էջերում «Ճակատամարտ»-ն անդրադառնում է այս խնդրին և նշում, որ Հայաստանի իշխանությունները բոլշևիկներին չդիմադրեցին այն պարզ պատճառով, որ ի դեմս նրանց ընդունում էին ռուսներին: Թերթը գտնում է, որ եթե բոլ-

¹ ՀԱՍ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:

շեկիկների փոխարեն Հայաստան ներխուժեին Ղենիկինի կամ Նիկոլայ 2-րդ ցարի գործերը, «հետեւանքը կը լինէր նոյնը-մերոնք չէին կռուի»¹: Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իշխանությունը գիջեց բոլշեիկներին, որովհետև Լեզրանը խոստացավ վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ի օգուտ Հայաստանի, օգնել Հայաստանին լուծելու Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանային հարցերը՝ պաշտպանելով մեր երկրի շահերը, վերականգնել երկաթուղային կանոնավոր հաղորդակցությունը, Ռուսաստանի Հայաստանին հասցնել տնտեսական օգնություն, Հայաստանում չհալածել մարդկանց իրենց քաղաքական դավանանքների և կուսակցական պատկանելության համար²:

Փաստորեն, իշխանությունը խաղաղ ձանապարհով բոլշեիկներին հանձնելիս, Հայաստանի առաջին հանրապետության ղեկավար գործիչներն ակնկալում էին երկրի համար այն բոլոր խնդիրների լուծումը, որը հանգամանքների բերումով իրենց չէր հաջողվում: Իսկ բոլշեիկ գործիչները խոստացան և պարտավորվեցին շուտափույթ լուծում տալ այդ խնդիրներին: Սակայն բոլշեիկները ոչ միայն ոչինչ չարեցին իրենց ստանձնած պարտավորություններն իրականացնելու համար, այլ ավելի ծանրացրին երկրի վիճակը:

Բոլշեիկների մուտքը Հայաստան իրենց գործադրած քայլերի պատճառով խորը հիասթափություն առաջ բերեց: Այդ հիասթափությունը բազմակողմանի էր: Այս առումով «Ճակատամարտ»-ի խմբագրականը գրում է. «Երկիր փրկելու խոստումներով Երևան թափած Պոլշեիկները երկու ամսուան ընթացքին աւելի շատ աւերք ու կազմալուծում յառաջ բերին, քան հին թրքական վարչութիւն մը»³:

«Ճակատամարտ»-ի թղթակիցը Փետրվարյան ապստամբության առաջին պատճառ համարում է ոչ միայն բոլշեիկների խոստումը չկատարելը, այլև վերջիններիս թույլ տված սանձարձակություններն ու վայրագությունները: Ապստամբության պատճառների մեջ թերթն առանձնացնում է նաև բոլշեիկների ցույց տված կառավարելու անընդունակությունը: Նրանց մոտ պակասում էր փորձառությունը, քաղաքական հասունությունը: Նրաք կարևորում էին միայն «հեղափոխական գիտակցությունը»⁴:

¹ «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

² «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

³ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922թ., 19 փետրուարի:

⁴ «Ճակատամարտ», 1922թ., 18 յունուարի:

Այսինքն, հայ բոլշևիկ գործիչների համար կակտորը ոչ այնքան երկրի խելամիտ կառավարումն էր, որքան հեղափոխության իրականացումը: Մոռանալով ժողովրդին տված իրենց խոստումների մասին, կոմունիստ ղեկավարներն ամենուր «հակահեղափոխականություն» էին փնտրում: Կարելի է ենթադրել, որ հեղափոխություն երևույթը ինքնանպատակ էր դարձել վերջիններիս համար:

«Ճակատամարտ»-ը առանձնակի ուշադրություն է դարձնում բոլշևիկյան այն հռետորաբանությանը, թե իբր տեղի է ունեցել բոլշևիկյան հեղափոխություն: Այս կապակցությամբ թերթը գրում է. «Յեղափոխութիւն չէր, որ կատարուեց Հայաստանի ներսում, այլ ռուսական բանակն էր, որ դրսից՝ մտցրեց Հայաստան Սովետական իշխանութիւն և գէնքի ուժով հարկադրեց հպատակիլ այդ իշխանութեան»¹: Շարունակելով՝ թերթը նշում է, որ հրաշք կլիներ, եթե Հայաստանում հեղափոխություն լիներ, որովհետև երկրի հասարակությունը դեռ այդքան հասունացած չէր սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու համար: Բացի այդ երկրում ապրող գյուղացիությունը և բանվորությունը որևէ հիմնավոր պատճառ չունեին իշխանությունների դեմ հեղափոխության դիմելու համար²: Հայաստանում չկար բուրժուազիա, որի դեմ կարելի լիներ պայքարել: «Հայ աշխատավորութեան իշխանութիւնը չէր, որ հաստատուեց հայ երկրի վրայ, այլ օտար ուժի դիկտատուրա», - եզրակացնում է թերթը³:

Փաստորեն, «Ճակատամարտ» թերթը հանգում են այն եզրակացության, որ Հայաստանում տեղի է ունեցել իշխանափոխություն, թեև առանց կռվի, բայց խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ: Իսկ ինչ վերաբերում է բանվորագյուղացիական իշխանության հաստատմանը, որի մասին անընդհատ թմբկահարում էին հայ բոլշևիկները, ապա այն հեռու էր իրականությունից: Հայաստանում իշխանության էին եկել ոչ թե բանվորներն ու գյուղացիները, այլ՝ Խորհրդային Ռուսաստանի կամակատար մի քանի արկածախնդիր հայ բոլշևիկներ:

Իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց հետո բոլշևիկները գործնական ոչինչ չարեցին իրենց տված խոստումներն իրականացնելու համար: Դեռևս մինչև փետրվարյան ապստամբության սկսվելը, 1921թ. հունվարի 25-ին «Ճակատամարտ»-ի խմբագրականում անդրադարձ է արվում եր-

¹ «Ճակատամարտ», 1922թ., 14 յունուարի:

² «Ճակատամարտ», 1922թ., 14 յունուարի:

³ «Ճակատամարտ», 1922թ., 15 յունուարի:

կիրը ճգնաժամից դուրս բերելու բուլշևիկյան իշխանությունների անկարողությանը. «Առանց երկրին մէջ իրական գետին և զանգուած ունենալու, ռուսական սուլիններու հովանաւորութեամբ Հայաստան մտած հայ պօլ-շեւիկները, հակառակ բոլոր շլացուցիչ յայտարարութիւններուն, չեն կրցած կացութեան տէր դառնալ մինչեւ այսօր, և իրենց աչքէն յառած կը պահեն դէպի Պաքու եւ Մոսկուա: Ասոր ամէնէն անվիճելի ապացոյցը այն է, որ իրենց թուրք «ընկերները տակաւին կը յամառին տեղաւորուիլ Կարսի եւ Ալեքսանդրաբօլի մէջ, Իգտիրի եւ Նախիջեւանի կողմերը, ասերելով եւ թալանելով, աքսորելով եւ կոտորելով, օղակի մը մէջ սեղմած Հայաստանը, իսկ իրենք զբաղած են քարոզչական գործունեութեամբ, քօնունիստական գրականութեան արտածումով եւ մանաւանդ ներածումով»¹: Այնուհետև թերթը շարունակում է, որ իրենց ձախողումները թաքցնելու նպատակով բուլշևիկները խոստում են «դաշնակցական դավադրության» մասին: Ըստ թերթի «այդ բոլոր յերիւրանքները ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ արդարացնել նախ՝ նորեկներուն ապիկարութիւնն ու անգործութիւնը, որ արդեն իսկ խոր յուսախաբութիւն պատճառած է ժողովուրդին, երկրորդ՝ պատրուակներ ստեղծել եղբայրասպան, քինախնդրական կամ հաւատաքննական հալածանքներու»²:

Այսպիսով, Կ.Պոլսի «Ճակատամարտ» թերթը փետրվարյան ապստամբության հիմնական պատճառ է համարում բուլշևիկների կողմից հայ ժողովրդին տված խոստումները չկատարելը, երկիրը կառավարելու նրանց անձեռնհասությունը: Թերթը առանձնացնում է այն կարևոր հանգամանքը, որ երկիրը ճգնաժամից դուրս բերելու իրենց անկարողությունը կոծկելու նպատակով հայ բուլշևիկները եղբայրասպան կռիվներ էին հրահրում:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ աներկբայորեն առաջնային էին բուլշևիկների իրականացրած անհարկի ձեռքբակալությունները իշխանությունը իրենց փոխանցելու առաջին օրվանից սկսած: Ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հադեպ հալածանքն ու ձեռքբակալությունը: Առավել ևս, որ այդ ձեռքբակալությունները «հիմնավորվում էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Իսկ բատնում

¹ «Ճակատամարտ», 1921թ., 25 յունուարի:

² «Ճակատամարտ», 1921թ., 25 յունուարի:

հայտնված մտավորական և գինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարությունները այլևս սպասելու տեղ չթողեցին:

«Ճակատամարտ»-ի մարտի 2-ի խմբագրականում անդրադարձ է արվում ձերբակալություններին և ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին¹:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ի Վարդան² անունով հոդվածագիրը «Կարմիր Հայաստանի կարմիր օրերը» հոդվածաշարում նշում է, որ Հայաստանի խորհրդային իշխանության առաջին գործը եղավ նախկին կառավարությանը վարկաբեկելը³: «Յեղկոմը Օհանջանեանի դահլիճին անդամները հռչակեց հայրենիքի դաւաճան, և հրամայեց, որ անմիջապէս ձերբակալուին», - գրում է հեղինակը⁴:

Վարդանը խոսում է նաև բոլշևիկների կողմից հայ հոգևորականության հալածելու մասին: Վերջիններիս արգելեցին դպրոցներում և մշակութային հաստատություններում որևէ պաշտոն զբաղեցնել: Դպրոցներում արգելվեց նաև Հայոց պատմության, գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունը, մտածելով որ դրանք կարող են ապագա սերունդներին մղել ազգայնականության և «հակայեղափոխականութեան»⁵:

Թերթի 1921թ. մարտի 5-ի համարում խոսվում է փետրվարի 16-18-ին բանտերում տեղի ունեցած կացնահարությունների մասին⁶: «Ճակատամարտ»-ը գրում է, որ կացնահարության համար բոլշևիկներն օգտանգործում էին թաթարներին⁷:

Այսպիսով, «Ճակատամարտ»-ը փետրվարյան ապստամբության կարևոր պատճառների մեջ առանձնացնում է բոլշևիկների իրականացրած ձերբակալությունների, քաղաքականությունը, բանտերում իրականացվող կացնահարությունները: Փաստորեն, Հայաստանի բոլշևիկ ղեկավարները, հակառակ իրենց տված խոստումներին, հալածանքներ կիրառեցին դաշնակցական գործիչների նկատմամբ: Այդ հալածանքները

¹ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

² Հոդվածաշարի հեղինակը մինչև 1920թ. հունվարի 30-ը եղել է Հայաստանում և ակնատեսն է եղել բոլշևիկյան սարսփների:

³ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

⁵ «Ճակատամարտ», 1921թ., 4 մարտի:

⁶ «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

⁷ «Ճակատամարտ», 1921թ., 19 մայիսի:

զնալով ավելի սաստկացան, ինչն էլ գրգռեց բոլշևիկն իշխանությունից դժգոհ երկրի բնակչությանը:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ «Ճակատամարտ»-ը առանձնահատուկ անդրադարձ է կատարում բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությանը: Երկարատև պատերազմից, գաղթականության հանգամանքից ծանր սոցիալական վիճակում հայտնված բնակչությունից բռնագրավում և թալան իրականացնելը անհետևանք չեր մնալու: Ընդ որում բռնագրավումների համար բերված բացատրությունները, եթե այդպիսիք լինում էին, որևէ արդարացու չունեին:

Թերթի մարտի 2-ի խմբագրականում ապստամբության պատճառների մասին խոսելիս ևս նշվում է կեղեքումների, բռնագրավումների, հակաբոլշևիկյան գործիչների դեմ դաժան հալածանքի, հայ սպանների աքսորի մասին¹: «Ճակատամարտ»-ը գրում է, որ փոխանակ հոգային Հայաստանի ազգաբնակչության կարիքները, Բոլշևիկները երկրից պարենը տեղափոխում էին Ադրբեջան, այդ թվում Ամերիկայից օգնություն ստացած կաթը, այլուրը դեղորայքը²:

Վերևում հիշատակվող Վարդանը գրում է, որ 1921թ. հունվարի 25-ը հեղկոմը հայտարարում է միօրյա խուզարկության օր: «Հրատարակուած էր հրաման մը, որուն համաձայն իւրաքանչիւր անձ իրաւունք պիտի ունենար իր մօտ պահելու 1 ամսուան պաշար, այսինքն 1 փութ ալիւր, 2 ֆունտ իւղ եւ այլն: Բայց զարհուրելի բան էր այդ խուզարկութիւնը, որ ամբողջ 24 ժամ տեսեց: Խուզարկութիւն չէր այդ, այլ թալան. Թալանէն աւելի սոսկալի բան մը: Կամայականօրէն տուներէն առին տարին ինչ որ գտան, մասնաւորաբար իրենց խստութիւնը գործ դնելով արեւմտահայութեան վրայ», - նշում է հոդվածագիրը³: Փաստորեն, բռնագրավումներն իրականացվում էին կամայականության ամենաբարձր դրսևորումներով: Գյուղացու ձեռքից խլում էին պարենի ամենավերջին պաշարը:

«Ճակատամարտ»-ի վկայակոչմամբ բոլշևիկները հայտարարում էին թե «հայ գիւղացիներու հրաւերով» իրենք եկած են ազատելու հայ գիւղացիութիւնը «Դաշնակներու լուծէն»⁴: Իրականում կոմունիստներին ոչ-ոք

¹ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

² «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 18 մայիսի:

չէր հրավիրել, առավել ևս գյուղացիությունը, ում ձեռքից խլեցին նրա «միակ հարստութիւնը՝ ցորենն ու անասունները»¹:

Բռնագրավել էն նաև մասնավոր գրադարանները, պատճառաբանելով որ «բուրժուաները» գիրք չեն կարող կարդալ²:

Այսպիսով, «Ճակատամարտ»-ի տեսակետով փետրվարյան ապստամբության հիմնական պատճառներից էին բոլշևիկների իրականացրած բռնագրավումները: Ժողովորդի ունեցվածքի համընդհանուր և անմիտ թալանը բոլշևիկների դեմ հանեց ամբողջ ազգաբնակչությանը:

Փետրվարյան ապստամբության պատճառներին անդրադառնալիս «Ճակատամարտ»-ը խոսում է նաև Հայաստանում մամուլի ազատության սահմանափակումների մասին: Այս կապակցությամբ թերթը գրում է. «Հայաստանի մէջ լոյս տեսնող թերթերէն ոչ մէկը կ'ապրի այսօր: Պօլշեիկները մտան չմտան փակեցին բոլոր թերթերը ինչ հոսանքի ալ պատկանէին անոնք, - ինչպէս Հ.Յ.Ղաշնակցութեան օրկան Յառաջը, ժողովրդական կուսակցութեան ժողովուրդը, Ռամկավարներու Հայաստանի ծայնը, Սօցեալ Դէմօկրատներու Սօցեալ Դէմօկրատը, Էս-Էռներու Սօցիալիստ Յեղափոխականը, զինուորական օրկան Ռազմիկը, Հայկօպի պաշտոնաթերթ Հայաստանի Կօօպէրացիան, և գաղառներու մէջ հրատարակուող բոլոր թերթերը: Ոչ միայն փակեցին զանոնք, այլև գրաւեցին անոնց տպարանները, որպէսզի իրենց թերթերը լոյս ընծայեն հոն»³: Փաստորեն, հայ բոլշևիկները բռնություն էին գործադրում նաև մամուլի միջոցների վրա, ինչը նույնպես խորացրեց ժողովրդի դժգոհությունը:

Անդրադառնալով 1921թ. Փետրվարյան ապստամբությանը՝ «Ճակատամարտ»-ը մատնանշում է ապստամբության այլ պատճառներ ևս: Օրինակ այն, որ չնայած երկիրը հռչակված էր խորհրդային, սակայն խորհուրդների փոխարեն հեղկոմներն են կառավարում երկիրը՝ 11-րդ կարմիր բանակից եկած հրահանգներով⁴: Թերթի հողվածագիրը բողոքում է նաև նրանից, որ փակվեցին բոլոր սկաուտական կազմակերպությունները, «մտառգվելով» որ սկաուտները նույնպես «ազգայնական» են դառնալու⁵: Թերթն անդրադառնում է այն խնդրին, որ բոլշևիկները վերացնում են բոլոր ընտրովի մարմինները, օր.՝ խորհրդարանը, և իշխա-

¹ «Ճակատամարտ», 1921թ., 18 մայիսի:

² «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 8 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

⁵ «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

նությունը հանձնում նշանակովի մարմիններին¹: Գործածությունից դուրս էր մղվում հայերենը²:

Փետրվարյան ապստամբության վերաբերյալ քննարկումներում առանձնակի տեղ է հատկացվում նրա ինքնաբուխ կամ նախապես կազմակերպված լինելու խնդրին: Հիմնական տեսակետն այն է, որ ապստամբությունը եղել է ինքնաբուխ, բոլշևիկյան իշխանությունների վարած անհեռատես հակաժողովրդական քաղաքականության անմիջական հետևանք: Հակառակ մոտեցման կողմնակիցները պնդում են, որ անկախ բոլշևիկների վարած սխալ քաղաքականությունից, ապստամբությունը նախապես ծրագրվել է: Այս կապակցությամբ «Ճակատամարտը» գրում է, որ Դաշնակցությունը ցանկություն չուներ ապստամբություն կազմակերպելու: «Ենթադրել, որ այդ սարսափելի պարտութենէն (Քեմալականներից կրած պարտության մասին է խոսքը – Խ.Ս.) ընդամենը երեք ամիս յետոյ որևէ մէկ կամնոյնիսկ մի քանի կուսակցութիւններ կրնային կազմակերպել ամբողջ ժողովուրդը և մղել զայն դէպի արիւնոտ պայքար թշնամիի մը դէմ, որուն ուժը անհամեմատ աւելի մեծ է քան Քեմալի ուժը, և որուն կիրարկած պայքարի ձեւերը պակաս դաժան չեն քան թրքական բարբարոսութիւնները, ենթադրել այդպիսի բան մը, կը նշանակէր գերագնահատել կուսակցութեան դերը, կը նշանակէր վերագրել մէկ կուսակցութեան կամ նոյնիսկ բոլոր կուսակցութիւններուն այնպիսի ուժ և կազմակերպական հանճար, որպիսին անոնք իրականին մէջ չունէին», - գրում է թերթը³: Թերթն ավելացնում է նաև, որ դաշնակցականների մեծ մասը բանտարկված էր, և ժողովուրդն ինքը բնագոյական շարժումով ոտքի ելավ⁴: Այսպիսով, կարելի է ընդունել, որ փետրվարյան ապստամբությունը միմիայն հետևանք էր հայ բոլշևիկների վարած դաժան քաղաքականության, ապստամբությունը նախապես չի ծրագրվել: Այլ բան է, որ հանգամանքների բերումով Դաշնակցական մի շարք աչքի ընկնող գործիչներ իրենց ձեռքն են վերցրել ապստամբության ղեկավարումը:

Անդրադարձնալով ապստամբության հետևանքներին «Ճակատամարտ»-ը գրում է, որ ապստամբությունից հետո խորհրդային իշխա-

¹ «Ճակատամարտ», 1921թ., 3 մարտի:

² «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 24 մայիսի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 24 մայիսի:

նությունները փոխեցին իրենց վերաբերմունքը, տեղի ունեցան պաշտոնանկություններ, նոր եկած պաշտոնյաները ավելի մեղմ քաղաքականություն սկսեցին վարել¹: Թերթն անդրադառնում է նաև Լենինի 1921թ. ապրիլի 14-ին նամակին², որտեղ Լենինը մեղմ քաղաքականության կոչ էր անում³:

Ամփոփում

4. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի 1921-1922 թվականների բազմաթիվ համարների քննության են ենթարկվում 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառները, ընթացքը և հետևանքները: Թերթի էջերում վեր են հանվում Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների կողմից կիրառվող ժողովրդահալած քաղաքականությունը, որն ի վերջո հանգեցնում է համընդհանուր ապստամբության: Ապստամբության պատճառների մասին խոսելիս հիմնական մատնանշվում են նախկին կառավարության (դաշնակցական) անդամների ձերբակալությունն ու բանտարկությունը, հայ բանակի սպայության ձերբակալությունն ու աքսորը, մտավորականության դեմ կիրառվող հալածանքը, գյուղացիության նույնիսկ ամենավերջին ունեցվածքի թալանը: Թերթը կենտրոնանում է նաև արտաքին քաղաքական ոլորտում գրանցված ձախողումներին, մասնավորապես չնայած նախապես իրենց տված խոստումներին, թուրքերին Կարսից, Ալեքսանդրապոլից, հեռացնելուն, Նախիջևանի, Ղարաբաղի և Ջանգեզուրի խնդիրների հայանպաստ որոշումներ իրականացնելու բոլշևիկյան իշխանությունների անկարողությանը: Անդրադառնալով ապստամբության նախապես կազմակերպված լինելու խնդրին՝ թերթը գտնում է, որ այն իքնաբուխ էր:

¹ «Ճակատամարտ», 1921թ., 25 մայիսի:

² «Ճակատամարտ», 1921թ., 1 յունիսի:

³ Լենին, ԵԼՏ, հ. 43, էջ 237-240:

Отражение Февральской революции 1921г. на страницах константинопольской газеты “Чакатамарт”

Хачатур Степанян

Резюме

Ключевые слова: газета "Чакатамарт", февральское восстание, революция, большевистская власть, Советская Армения, деятели, страна.

Константинопольской ежедневник “Чакатамарт” за 1921-1922гг. упомянул о февральской революции 1921г. в Армении. Говоря о причинах восстания газета отмечает, что эти в основном связаны с неправильной политикой большевистской власти. Применение политику арестов, конфискации и преследования, уничтожение армянской армии и офицеров, неспособность решения обещанных проблем с соседями лидерами большевиков в Армении, принуждали народу в вооруженную восстанию.

Касаясь на последствии восстания “Чакатамарт” ценит тот факт, что армянский народ очередной раз доказал свою готовность бороться за свои права, в результате чего смягчена большевистская антинародная политика в Армении.

Reflection of 1921 February rebellion in Costantinopolis's "Chakatamart" Daily

Khachatur Stepanyan

Summary

Key words: “Chakatamart” daily, February rebellion, revolution, Bolshevik authoritres, Soviet Armenia, statesmen, country.

Daily "Chakatamart" of Costantinopolis in 1921-1922 refers the issue of February rebellion in Armenia occurred in 1921. Mentioning main reasons of rebellion Daily mainly points out wrong policy of Bolshevik authorities. Policy of arrests, confiscations and persecutions by the Armenian Bolshevik authorities, annihilation of Armenian army and officers, inefficiency to solve problems promised the neighbors prompted the nation to military rebellion. Speaking of implications of rebellion "Chakatamart" emphasizes the willingness of Armenian nation to struggle for their rights. According to Daily "Chakatamart" persecution policy towards people in Armenia has mitigated.